

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

« ____ » « _____ » 2020 թվականի N ____-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ԶԱԶ-ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ամրացված 3320000 ՀՀ դրամ համախառն հաշվեկշռային արժեքով, 400423 ՀՀ դրամ կուտակված մաշվածությամբ, 2919577 ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով գույքը (հիմնական միջոցներ)՝ համաձայն N 1 հավելվածի, անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության «Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, երկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության «Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ համատեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) կնքման և հանձնման-ընդունման աշխատանքների

կատարումը՝ սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ՝

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՑԱՆԿ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ԶԱԶ-ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ**

h/h	Գույքի անվանումը	Գույքային համարը	Ձեռքբերման տարեթիվ	Գույքի		
				համախառն հաշվեկոչային արժեքը վերագնահատումից հետո (ՀՀ դրամ)	կուտակված մաշվածություն (ՀՀ դրամ)	հաշվեկոչային արժեք (ՀՀ դրամ)
	Ընդամենը			3320000	400423	2919577
	Հիմնական միջոցներ			3320000	400423	2919577
1	Ռոյալ «Բյուտներ»	001	1977	3320000	400423	2919577

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ԶԱԶ-ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1.	Անհրաժեշտությունը
	«Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է «Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մշակույթին միջոցառումների, ինչպես նաև համերգների պատշաճ կարգով կազմակերպման և ապահովման անհրաժեշտությամբ:
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հաշվեկշռում հաշվառված գույքը (Ռոյալ «Բլյուտներ») չի օգտագործվում և այն չօգտագործելու պարագայում այն կարող է կորցնել իր օգտագործման նպատակայնությունը, իսկ «Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը կարիք ունի այդպիսի գույքի, ուստի նպատակահարմար ենք համարում այն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել կազմակերպությանը:
3.	Կարգավորման նպատակը և բնույթը
	Որոշման նախագծի ընդունման նպատակը «Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անհրաժեշտ գույքով ապահովելն է:
4.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	Նախագիծը մշակվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:
5.	Ակնկալվող արդյունքը
	Մշակութային միջոցառումների, ինչպես նաև համերգների պատշաճ կարգով կազմակերպում և ապահովում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ԶԱԶ-ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ՎՐԱ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ պետական ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ ՀՀ պետական բյուջեի կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ծախսերի էական ավելացում և նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ԶԱԶ-ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. «Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ պետական ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ պետական ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ:

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p>ՀՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 01/8-3/18185-2019 գրություն</p>	<p>Որոշման նախագծի վերաբերյալ հայտնել է, որ նախագծում հղում է արվում «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածին, մինչդեռ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի տարածվում «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ «կառավարման լիազորություններ իրականացնող սահմանադրական մարմնի (պաշտոնատար անձի) կողմից կառավարվող (ղեկավարվող) պետական մարմինների վրա» և առաջարկել է նախագծի նախաբանում ««Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ» բառերն անհրաժեշտ է փոխարինել ««Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ» արտահայտությամբ:</p>	<p>Ընդունված է:</p>	<p>Նախագիծը լրամշակվել է:</p>
<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 01/21.1/18996-19 գրություն</p>	<p>Որոշման նախագծի վերաբերյալ ներկայացրել է հետևյալ առաջարկությունները.</p> <ol style="list-style-type: none"> 1. Նախագծի նախաբանից հանել «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 4-րդ հոդվածի վերաբերյալ հղումը. 2. Նախագծի 2-րդ կետում նշված «պայմանագրի» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ պայմանագիր)» բառերը. 3. Նախագծի 2-րդ կետում «կատարումը» բառից հետո լրացնել «սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին» բառերը: 	<ol style="list-style-type: none"> 1. Ընդունված է: 2. Ընդունված է: 3. Ընդունված է: 	<ol style="list-style-type: none"> 1. Նախագիծը լրամշակվել է: 2. Նախագիծը լրամշակվել է: 3. Նախագիծը լրամշակվել է:
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 01/27.1/30338-2019 գրությամբ ներկայացված կարծիք</p>	<p>«Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:</p>	<p>Ընդունվել է «Ի գիտություն»:</p>	